ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Անհրաժեշտությունը

Ներկայացվող օրենքների նախագծերը մշակվել են՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650 - Լ որոշմամբ հաստատված հավելված N 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» կատարումն ապահովող միջոցառումների 258.1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902 - Լ որոշմամբ հաստատված հավելված N 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 10.1-ին կետի:

Գործող իրավական դաշտի բարելավման անհրաժեշտությունն առաջացել է զբոսաշրջության բնագավառին բնորոշ դինամիկ զարգացման և նոր մարտահրավերների պայմաններում զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և զբոսաշրջիկների փոխադարձ իրավունքների և պարտավորությունների հստակեցման, զբոսաշրջային ծառայություններին ներկայացվող պահանջների հստակեցման և զբոսաշրջային գործունեության նկատմամբ վերահսկողության միջոցների հստակեցման իրական անհրաժեշտությունից:

Ակնկալվում է, որ առաջարկվող փոփոխությունները և լրացումները նպաստելու են քաղաքացիների սպառողական իրավունքների պաշտպանությանը, զբոսաշրջային գործունեության ծառայություններին և սուբյեկտերին ներկայացվող պահանջների հստակեցմանը, համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանը և այլն:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության ոլորտը կարգավորվում է «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), որը գործում է 2003 թվականից:

Օրենքով սահմանվում են զբոսաշրջային գործունեության առնչությամբ ծագող իրավահարաբերությունները:

Զբոսաշրջության ոլորտում քաղաքականություն մշակող մարմնին վերապահված են հիմնականում աջակցող գործառույթներ: Լիազոր մարմինը չունի ոլորտում ծառայություններ մատուցող սուբյեկտների նկատմամբ վերահսկողական լծակներ: Միակ բացառությունը վերաբերում է սոցիալական փաթեթում ներառված հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկված զբոսաշրջային օպերատորներին: Վերջիններիս դեպքում ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ 2022 թվականի սեպտեմբերի 30-ի N 1567-Լ հրամանով՝ Զբոսաշրջության կոմիտեն իրականացնում է նշված ծառայությունները մատուցող զբոսաշրջային օպերատորների՝ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգումը և հաշվառումը:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջային կազմակերպության կողմից պարտավորությունները չկատարելու դեպքում օրենքով հաստատված սպառողների շահերի պաշտպանության, Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման վերահսկողության մեխանիզմներ չկան:

Զբոսաշրջության ոլորտում վերոնշյալ մեխանիզմի բացակայության արդյունքում շատ հաճախ խախտվում են ինչպես սպառողների (տեղացի և օտարերկրյա զբոսաշրջիկների) իրավունքները, այնպես էլ խաթարվում են գործարար հարաբերությունները մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջև, ինչի հետևանքով վերջիններս կրում են թե՛ նյութական, թե՛ բարոյական վնասներ: Այս ամենը իր բացասական հետևանքն է թողնում Հայաստանի՝ որպես գրավիչ զբոսաշրջավայրի նկարագրի վրա:

Վերոգրյալի ապացույցը վերջին տարիների ընթացքում մի շարք պատճառներով զբոսաշրջային գործունեության սուբյեկտների (զբոսաշրջային օպերատորների և զբոսաշրջային գործակալների) կողմից սպառողների հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերի խախտման կամ արդեն իսկ կատարված վճարումների պարագայում ծառայությունների մատուցման անհնարինության կամ ուղղակի ծառայություններ չստանալու մի շարք դեպքերն են, որոնք լայն արձագանք են ստացել հանրության շրջանում, դարձել են «Զբոսաշրջության մասին» նոր օրենքի մշակման անհրաժեշտության հիմնական պատճառներից մեկը:

Վերոնշյալի պատճառով ոչ միայն խախտվում են սպառողների (զբոսաշրջիկների) իրավունքները, այլև երբեմն ֆինանսական վնաս է կրում նաև պետությունը՝ հաշվի առնելով այն դեպքերը, երբ անհրաժեշտություն է առաջանում արտագնա զբոսաշրջիկներին արտերկրից տեղափոխել հայրենիք: 2019թ. միայն մեկ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից սպառողների նկատմամբ պարտավորությունները չկատարելու պատճառով պետական բյուջեից **50 մլն.** ՀՀ դրամից ավել ծախսվել է ՀՀ քաղաքացիների՝ Եգիպտոսից վերադարձը ապահովելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպառողների կողմից կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերի խախտման կամ արդեն իսկ վճարված ծառայությունները չստանալու մի շարք դեպքերի վերաբերյալ բողոքների մի մասը սահմանված կարգով ներկայացված է համապատասխան մարմիններ՝

ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեն ՀՀ դատական դեպարտամենտից, Ոստիկանությունից և Քննչական կոմիտեից ստացել է տեղեկատվություն՝ համաձայն որի 2019թ. մինչև 2022թ.մայիս ամիսը ներառյալ.

- ՀՀ ոստիկանությունում հաշվառվել է 25 հանցագործության դեպք:
- Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի վարույթում առկա է 2 քրեական գործ, որոնցից մեկին միացված է 184 քրեական գործ. տուժող է ճանաչվել 215 անձ: Որպես մեղադրյալ ներգրավվել է 2 անձ, պատճառված վնասի չափը՝ 250.616.995 ՀՀ դրամ:
- Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի վարույթում գտնվել է 4 քրեական գործ: Տուժողները 4-ն են, իսկ մեղադրյալները՝ 3-ը: Պատճառված վնասը՝ 2.737.345 ՀՀ դրամ:
- Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում քննվել է 1 քրեական գործ: Տուժողները 75-ն են, իսկ մեղադրյալը՝ 1-ը: Պատճառված վնասը՝ 20.332.210 ՀՀ դրամ: Քրեական գործեր կան, որոնք կասեցվել են մեղադրյալի գտնվելու վայրը պարզված չլինելու հիմքով:
- ՀՀ դատական դեպարտամենտի կողմից համապատասխան վիճակագրություն չի վարվում, սակայն, հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ ձեռնարկվել են միջոցառումներ ակնկալվող տեղեկատվության հավաքագրման ուղղությամբ, մասնավորապես՝ «Դատական ավտոմատացված համակարգ» համակարգչային ծրագրի որոնման գործիքների միջոցով կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում պարզ է դարձել, որ սպառողների կողմից կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերի խախտման կամ արդեն իսկ վճարված ծառայությունները չստանալու մի շարք դեպքերի վերաբերյալ ՀՀ դատարաններ մուտքագրված հայցադիմումների հիմքում առկա են տարբեր պահանջներ, ուստի, գործնականում, նմանատիպ պահանջով մեծաքանակ դատական գործերի առկայությամբ պայմանավորված, հնարավոր չէ տարանջատել դատական գործերը:

Արդյունքում, 2019թ., 2021թ. և 2022թ. հունվար-մայիս ժամանակահատվածում (2020թ.-ը, պայմանավորված կորոնավիրուսային համաճարակի տարածմամբ և փակ սահմանների իրավիճակում ոլորտի ծառայություն մատուցողների գործունեության անհնարինությամբ, կարող ենք չներառել վերլուծման ենթակա ժամանակահատվածում) ունենք մեծաքանակ դատական գործերի առկայություն, 25 հանցագործության դեպք, հարուցված 190 քրեական գործ, որոնց շրջանակներում 294 տուժող, մեղադրյալները 7-ն են, իսկ պատճառված վնասի չափը՝ **270.686.550** ՀՀ դրամ:

Բացի վերոգրյալից՝ գործող օրենսդրությամբ կարգավորված չեն նաև մի շարք հարցեր, ինչպես օրինակ՝

ա. զբոսավարների (այդ թվում նաև օտարերկրյա) կողմից իրենց ծառայությունների շրջանակում զբոսաշրջիկներին Հայաստանի և հայ ժողովրդի մասին ոչ ճշգրիտ և/կամ ոչ լիարժեք տեղեկատվության, ոչ պատշաճ ծառայությունների տրամադրում,

բ. հյուրանոցային ծառայությունների՝ միջազգային չափանիշերին համապատասխան որակի ապահովման և ըստ պատշաճի (տեսակին և որակավորման կարգերին համապատասխան) ներկայացում,

գ. զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց և վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հստակ և ճշգրիտ տեղեկատվություն,

դ. զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների կողմից իրենց գործունեության շրջանակում պատշաճ և որակյալ ծառայությունների մատուցում՝ տեղեկատվության տրամադրում,

ե. ծառայությունների մատուցման որակական միասնական չափանիշների հաստատում,

զ. զբոսաշրջային ավտոբուսներով անվտանգ ուղևորափոխադրումների ապահովում,

է. զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց հստակ տարբերակում և այլն:

Կազմակերպված/ամբողջական փաթեթով, և ոչ միայն, զբոսաշրջային խմբերի սպասարկման դեպքում մեծ դեր է կատարում զբոսավարը, որը շրջագայության ամբողջ ընթացքում ուղեկցում է խմբին և պատասխանատվություն կրում՝ այդ ժամանակահատվածում ապահովելու ծագած հարցերի լուծումը:

Զբոսավարը այն անձն է, ով ներկայացնում է երկիրը, և բացի մասնագիտական գիտելիքներից, պետք է տիրապետի մի շարք հմտությունների, որոնք հիմք են հանդիսանում զբոսաշրջիկների բավարարվածության և դրական արձագանքի համար: Բազմաթիվ են դեպքերը երբ օտարերկրյա գործընկերը ցանկություն է հայտնում, որ հերթական խմբին սպասարկի արդեն ճանաչված զբոսավարը: Այս դեպքում կարող ենք խոսել օգուտների մասին, քանի որ միայն բարձր պատրաստվածությամբ, լեզվի լավ իմացությամբ, հմտություններին տիրապետող զբոսավարը կարող է ապահովել պահանջվող որակ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայիս զբոսաշրջիկը շրջագայում է արդեն իսկ որոշակի տեղեկատվության ծավալով՝ կարող է առցանց հետևել և անմիջապես գրանցել սխալ տեղեկատվությունը՝ սխալ և ոչ պատշաճ մատուցմամբ տեղեկատվությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ նաև Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ երկրի նկարագրի վրա:

2019 թվականին հարցում է անցկացվել զբոսաշրջիկների շրջանում Տվյալների հավաքագրման հիմնական գործընթացն իրականացվել է 800 զբոսաշրջիկների հարցման, ինչպես նաև «մարդակենտրոն նախագծմամբ» 25 ընդգրկուն հարցումների միջոցով:

Հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ հարցվածների մի զգալի հատված առաջարկել է բարելավել զբոսավարների կողմից և ընդհանրապես մատուցվող ծառայությունների որակը, ինչպես նաև՝ միջին և միջինից ցածր է գնահատել կացության ծառայությունների հետ կապված հարցադրումները:

Հարցման արդյունքում ներկայացված վերլուծությունը փաստում է, որ մի շարք մարզերում (Արագածոտն, Արմավիր, Լոռի, Սյունիք, Վայոց ձոր) ներկայացված բացթողումների կամ մարտահրավերների ցանկում տեղ է գտել զբոսավարների և ուղեկցորդների որակյալ ծառայություն մատուցելու խնդիրը:

Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարության մշակման նպատակով իրականացված վերլուծության արդյունքում ևս ոլորտի մարտահրավերների շարքում դասվում է զբոսավարների և ուղեկցորդների գործունեության կարգավորման բացը:

Հանդիպումների և քննարկումների ընթացքում մասնավոր հատվածի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ բացի այն, որ հաճախ հանդիպում են զբոսավարներ, որոնք ոլորտի բաց դաշտի պայմաններում որոշ օտար լեզուների տիրապետելու շնորհիվ կարողանում են զբոսավարի գործունեություն իրականացնել՝ տրամադրելով ոչ հավաստի, երբեմն՝ ոչ իրական տեղեկատվություն, առկա է նաև անվտանգության խնդիր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում ծառայություն մատուցող այլ երկրների ռեզիդենտ հանդիսացող զբոսավարները օտարերկրյա զբոսաշրջիկներին հայ ժողովրդի պատմության, մշակույթի, ազգային-ազատագրական պայքարի, ճարտարապետության, կրոնի և այլնի մասին տեղեկատվությունը տրամադրում են իրենց իմացությունների շրջանակում կամ իրենց շահերից ելնելով:

Միջազգային փորձը (կցվում է ուսումնասիրությունը) ցուց է տալիս, որ զբոսավարների և ուղեկցորդների ծառայությունների որակի ապահովման լավագույն տարբերակը վերջիններիս գործունեության կարգավորումն է: Շատ երկրներում զբոսավարների և ուղեկցորդների գործունեությունը լիցենզավորվում է, մի շարք երկրներում՝ որակավորում, նաև՝ վերապատրաստման և ատեստավորման պահանջներ են ընդունված:

Հայաստանում գործում են բազմաթիվ ընկերություններ, որոնք կազմակերպում են զբոսավարների պատրաստման և վերապատրաստման դասընթացներ՝ արդյունքում շնորհելով որակավորման վկայականներ: Սակայն, ներկայումս չունենք որևէ միասնական կրթական ծրագիր՝ նվազագույն գիտելիքների և հմտությունների պահանջով:

Ի տարբերություն այլ ծառայություն մատուցողների՝ հյուրանոցային ծառայություններ մատուցող օբյեկտների՝ իրենց տեսակնին չհամապատասխանող տեսակով ներկայանալը ակնհայտ է, տեսանելի է թե հյուրանոցային տնտեսության օբյեկտի արտաքին ձևավորման մեջ, թե որոնողական համակարգերում, թե վերջիններիս կայքերում:

Հյուրանոցային տնտեսության օբյեկտի՝ որակավորման կարգի նշանի կամ մոլորեցնող նմանությամբ որակավորման կարգի նշանի օգտագործումը, եթե վերջինս չունի որակավորման կարգի նշան, ևս ակնհայտ խնդիր է, քանի որ միջազգային չափանիշներին չհամապատասխանող, բայց որակավորման կարգի օգտագործմամբ ծառայությունները կարող են ընդհանուր ընկալում ձևավորել Հայաստանի հյուրանոցային ծառայությունների վերաբերյալ: Հյուրանոցային տնտեսության օբյեկտներ շահագործող անձինք որակավորման կարգի վերաբերյալ տեղեկատվությունը օգտագործում են թե՛

իրենց արտաքին ձևավորման մեջ, թե՛ որոնողական համակարգերում և թե՛ իրենց ինտերնետային կայքերում ու սոցիալական ցանցերում:

Ոչ պակաս կարևոր խնդիր է զբոսաշրջիկների անվտանգ երթևեկությունը զբոսաշրջային ավտոբուսներով: Զբոսաշրջային ավտոբուսների որակի և անվտանգության պահպանմանը զուգահեռ կարևորվում է կայանատեղերի ապահովման և սահմանային անցման կետերում առաջացող որոշակի խնդիրների լուծումը:

Հայաստանի՝ որպես գրավիչ զբոսաշրջային երկրի համար կարևորագույն խնդիր է նաև նշանակալի զբոսաշրջային ռեսուրսներ պարունակող բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացումը, ինչպես նաև զբոսաշրջության ապակենտրոնացումը դեպի մարզեր:

Վերոգրյալ խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է՝

ա. հստակեցնել ՀՀ օրենսդրությամբ ոլորտում կարգավորման շրջանակը.

բ. զբոսաշրջության բնագավառում ճշգրիտ վիճակագրական տվյալների հավաքագրման և որակյալ ուսումնասիրությունների ու վերլուծությունների իրականացման, առկա ռեսուրսների գնահատման և պետական քաղաքականության առավել արդյունավետ մշակման ու իրականացման նպատակով՝

- ✓ բարելավել զբոսաշրջության ոլորտի վարչական վիճակագրության վարումը՝ զբոսաշրջության ոլորտի էլեկտրոնային գրանցամատյանի և զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանների վարման մեխանիզմների ներդրմամբ,
- ✓ արդիականացնել և հստակեցնել զբոսաշրջության բնագավառում օգտագործվող հասկացությունները.

գ. զբոսաշրջային ծառայությունների որակի բարելավման, քաղաքացիների սպառողական իրավունքների լիարժեք պաշտպանության ապահովման նպատակով ներդնել զբոսաշրջային ծառայությունների նկատմամբ միջազգային չափանիշներին համապատասխանող կարգավորումներ և սահմանել դրանց պահպանման և արդյունավետ իրականացման համար վերահսկողական մեխանիզմներ, ինչը ենթադրում է

- ✓ զբոսաշրջային ծառայությունների տրամադրման պայմանների հստակեցում՝ զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց գործունեությունը դարձնելով ծանուցման ենթակա գործունեության տեսակ,
- ✓ զբոսաշրջության ծառայությունների մատուցման պայմանագրերում ներառվող պարտադիր նվազագույն պահանջների հստակեցում և գրավոր պայմանագրերի կնքման ապահովման մեխանիզմների ներմուծում,
- ✓ քաղաքացիների սպառողական իրավունքների պաշտպանության նպատակով նախատեսել պարտադիր անհետկանչելի ֆինանսական երաշխիք,
- ✓ զբոսաշրջային ծառայություններ մատուցողների նկատմամբ ներկայացվող պահանջների հստակեցում,
- ✓ զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ արդյունավետ

վերահսկության և պատասխանատվության կիրառման համակարգերի հստակեցում,

- ✓ զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց կողմից Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացման և գովազդման նկատմամբ պահանջի ներդրում.

դ. հաշվի առնելով զբոսաշրջային ակտիվ սեզոնի ընթացքում կայանատեղերի բացակայությունը՝ ներդնել զբոսաշրջային ավտոբուսներով ուղևորափոխադրողների որակավորման համակարգ և ապահովել զբոսաշրջային ավտոտրանսպորտային ուղևորափոխադրողների համար հատուկ առանձնացված կայանատեղեր,

ե. հստակեցնել զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններին ներկայացվող պահանջները և ապահովել զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների պատշաճ գործունեության համար անհրաժեշտ մեխանիզմներ,

զ. մշակել ծրագրեր զբոսաշրջային ռեսուրսներ պարունակող բնակավայրերը զբոսաշրջային կենտրոն կամ զբոսաշրջային գյուղ դարձնելու համար, ինչի արդյունքում կունենանք բարելավված ենթակառուցվածքներ, որակյալ ծառայություններ: Զբոսաշրջային կենտրոնների ու գյուղերի առկայությունը նպաստում է զբոսաշրջության ապակենտրոնացմանը Երևանից դեպի մարզեր և համայնքներում կյանքի որակի բարելավմանը:

Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է վերանայել գործող իրավական դաշտը նաև հետևյալ ուղղություններով՝

1. ապահովել ամբողջական վիճակագրություն, որակյալ հետազոտություններ, ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ ի նպաստ պետական քաղաքականության արդյունավետ մշակման ու իրականացման,
2. ապակենտրոնացնել զբոսաշրջությունը դեպի ՀՀ մարզեր, այդ թվում նաև գյուղական համայնքներ,
3. բարելավել և զարգացնել ենթակառուցվածքները,
4. ամրապնդել և շարունակական բարձրացնել ծառայությունների որակը,
5. զարգացնել մարդկային ռեսուրսները,
6. բարելավել զբոսաշրջային կենտրոնների և զբոսաշրջային գրավչության օբյեկտների կառավարումը,
7. աջակցել զբոսաշրջության բնագավառում գործող, մասնավոր հատվածը ներկայացնող կազմակերպությունների գործունեությանը,
8. ամրապնդել և շարունակական ակտիվացնել միջազգային համագործակցությունը,
9. ձևավորել զբոսաշրջիկների և զբոսաշրջային ծառայություններ մատուցողների իրավունքների պաշտպանություն ապահովող օրենսդրություն:

Միջազգային փորձը ցուց է տալիս, որ զբոսաշրջային ծառայությունների որակի ապահովման լավագույն տարբերակը զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց գործունեության կարգավորումն է:

Եվրամիության տարածքում զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կարգավորվում է 1990 թվականի հունիսի 13-ի «Զբոսաշրջային, հանգստի և ճամփորդական փաթեթների մասին» և 2015 թվականի նոյեմբերի «Ճամփորդական փաթեթների և համակցված ճամփորդական համաձայնությունների մասին» ԵՄ դիրեկտիվներով:

Համաձայն վերոնշյալ դիրեկտիվների՝ զբոսաշրջային օպերատորները և գործակալները հաճախորդների առաջ պատասխանատվություն են կրում իրենց կողմից առաջարկված փաթեթում ներառված բոլոր ծառայությունների պատշաճ մատուցման համար: Եթե փաթեթում ներառված ծառայությունների էական հատվածը չի կարող մատուցվել օպերատորի կամ իր գործակալի մեղքով, ապա օպերատորը պարտավոր է կա՛մ առանց հավելավճարի հաճախորդին առաջարկել նույն կամ ավելի բարձր որակի ծառայություններ, կա՛մ համապատասխանաբար նվազեցնել փաթեթի արժեքը: Եթե փաթեթը ներառում է նաև հաճախորդների փոխադրում, ապա օպերատորը պարտավոր է առանց հավելավճարի ողջամիտ ժամկետներում ապահովել հաճախորդի վերադարձը, ինչպես նաև ըստ անհրաժեշտության վերջինիս կեցությունը առավելագույնը 3 օրվա համար:

Միաժամանակ, ԵՄ կարգավորումների համաձայն, անդամ պետությունները պարտավոր են ներդնել բավարար ապահովման միջոցներ՝ զբոսաշրջային օպերատորների անվճարունակության պարագայում հաճախորդների կրած վնասները հատուցելու նպատակով: Եթե փաթեթը ներառում է նաև հաճախորդների փոխադրում, ապա նման ապահովման միջոցները պետք է նաև երաշխավորեն հաճախորդի վերադարձը: Ապահովման միջոցները բավարար են, եթե ծածկում են զբոսաշրջիկի կողմից իրականացվելիք բոլոր ողջամիտ ծախսերը, այդ թվում՝ վերջինիս վերադարձը: Պահանջը վերաբերում է նաև այն օպերատորներին, որոնք, չնայած ռեզիդենտ չլինելուն, ծառայություններ են առաջարկում ԵՄ տարածքում: Օրինակ՝ Մալթայի կարգավորումներով նախատեսվում է զբոսաշրջային օպերատորների լիցենզավորում, որի պարտադիր նախապայման է Զբոսաշրջային փաթեթի անվճարունակության հիմնադրամում (այսուհետ՝ Հիմնադրամ) օպերատորի մասնակցությունը, իսկ Ֆրանսիայի ազգային օրենսդրությունը սահմանում է զբոսաշրջային ծառայությունների շահառուների իրավունքների պաշտպանության երկու մեխանիզմ, որոնք կիրառվում են զուգահեռաբար՝ մասնագիտական քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն և բանկային երաշխիք կամ նույնանման իրավունքներ հավաստող փաստաթուղթ վարկային կազմակերպությունից, հիմնադրամից կամ ասոցիացիայից:

Սպառողների իրավունքները պաշտպանելու նպատակով ՌԴ օրենսդրությունը զբոսաշրջային օպերատորներին պարտավորեցնում է ընտրել երկու այլընտրանքային մեխանիզմներից որևէ մեկը՝

- ✓ քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն
- ✓ բանկային երաշխիք

Եթե օպերատորը գործունեություն է իրականացնում արտագնա զբոսաշրջության ոլորտում, ապա պարտավոր է նաև անդամակցել արտագնա տուրիզմի որևէ ասոցիացիայի և ունենալ անձնական պատասխանատվության ֆոնդ:

Չինաստանի օրենսդրությամբ նախատեսվում է զբոսաշրջային ընկերությունների լիցենզավորում, որը ստանալու համար կազմակերպությունը պարտավոր է ունենալ՝

- ✓ բիզնես գործունեություն իրականացնելու համար տարածք,
- ✓ ծառայության մատուցման համար անհրաժեշտ գույք,
- ✓ 300.000 յուան (մոտ 42500 ԱՄՆ դոլար) գրանցված կապիտալ:

Զբոսավարների և ուղեկցորդների գործունեությունը շատ երկրներում լիցենզավորվում է, մի շարք երկրներում՝ որակավորում, նաև՝ վերապատրաստման և ատեստավորման պահանջներ են ընդունված: Մալթայում զբոսավարի գործունեությունը լիցենզավորվում է: Լիցենզիայի տրամադրման կարգը, ժամկետները սահմանում է կառավարությունը: Զբոսավարի լիցենզիա ստանալու համար անձը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝ ունի Մալթայի կամ ԵՄ անդամ որևէ երկրի քաղաքացիություն կամ ունի Մալթայում աշխատելու իրավունք, ունի զբոսավարի որակավորում կամ համապատասխան բարձրագույն կրթություն, առնվազն 18 տարեկան է, տիրապետում է բարեվարքության կանոններին, նախորդող 10 տարիների ընթացքում 1 տարի անընդմեջ զբոսավարի գործունեություն է իրականացրել այն ԵՄ անդամ պետություններում, որտեղ չկա զբոսավարի գործունեության կարգավորում: Սիմգապուրում ևս գործում է լիցենզավորման պահանջ: Լիցենզավորված զբոսավար դառնալու համար անհրաժեշտ է անցնել դասընթաց՝ գրանցվելով SkillsFuture Singapore (SSG)-ի կողմից կազմակերպված զբոսավարի որակավորման դասընթացին:

Մի շարք երկրներում (Ֆրանսիա, Խորվաթիա, Լատվիա, Բուլղարիա, Ռուսաստան, Ճապոնիա և այլն) գործում է որակավորման/սերտիֆիկացման կամ ծանուցման պահանջ:

Ծառայությունների որակի ապահովման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ներկայումս չունենք նվազագույն գիտելիքների և հմտությունների պահանջով միասնական կրթական ծրագիր զբոսավարների և ուղեկցորդների համար: Հայաստանում գործում են բազմաթիվ ընկերություններ, որոնք կազմակերպում են զբոսավարների և ուղեկցորդների պատրաստման և վերապատրաստման դասընթացներ՝ արդյունքում շնորհելով որակավորման վկայականներ: Որևէ մեխանիզմ սահմանված չէ՝ ստուգելու տրամադրվող գիտելիքների և հմտությունների որակական չափանիշները:

3. Կարգավորման նպատակը և բնույթը

Ներկայացված նախագծերը վերոնշյալ խնդիրների լուծմանն ու նպատակների իրականացմանն ուղղված համալիր միջոցառումների էական մասն են կազմում և ուղղված են զբոսաշրջային արդյունաբերության մասնավոր հատվածի ներկայացուցիչների և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ բազմաթիվ քննարկումների ընթացքում բարձրացված, ինչպես նաև

գործող օրենսդրության կիրառման արդյունքում առաջացած գործնական խնդիրների լուծմանը:

Առաջարկվող փոփոխություններով և լրացումներով, մասնավորապես՝

1. հստակեցվել են զբոսաշրջության բնագավառում օգտագործվող հասկացությունները և սահմանվել են նոր հասկացություններ՝ անհրաժեշտության դեպքում համապատասխանեցնելով Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 25-ի 2015/2302/ԵՀ հրահանգով նախատեսված դրույթներին:,
2. զբոսաշրջության բնագավառում ճշգրիտ վիճակագրության վարման, որակյալ հետազոտությունների և վերլուծությունների իրականացման և ոլորտի պետական քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքի ձևավորման ու հայկական զբոսաշրջային արդյունքի և զբոսաշրջային շուկաների դիվերսիֆիկացման գործընթացին նպաստելու նպատակով նախատեսվել են դրույթներ ոլորտի էլեկտրոնային գրանցամատյանի ներդրման և զբոսաշրջային ռեսուրսների գույքագրման և գրանցամատյանի վարման վերաբերյալ,
3. քաղաքացիների սպառողական իրավունքների պաշտպանության նպատակով նախատեսվել է զբոսաշրջային փաթեթների պարտադիր անհետկանչելի ֆինանսական երաշխիք,
4. զբոսաշրջային ծառայությունների որակի բարելավման, ծառայությունների նկատմամբ չափանիշների սահմանման և պահպանման, սպառողի իրավունքների լիարժեք իրականացման ապահովման և այդպիսով Հայաստանի զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացման նպատակով նախատեսվել է զբոսաշրջային օպերատորների, զբոսաշրջային գործակալների, հյուրանոցային ծառայությունների, զբոսավարների և ուղեկցորդների գործունեությունը դարձնել ծանուցման ենթակա գործունեության տեսակ, զբոսավարների և ուղեկցորդների վերապատրաստում և որակավորում, ինչպես նաև նախատեսվել են պահանջներ զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների նկատմամբ, իսկ զբոսաշրջային ավտոբուսների համար նախատեսվել է կամավոր որակավորման հնարավորություն.
5. Զբոսաշրջության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կանխարգելման և վերացման նպատակով նախատեսվել են օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողությանը և խախտումների համար վարչական պատասխանատվության միջոցների հստակեցմանը վերաբերող դրույթներ:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ:

Նախագիծը մշակման բոլոր փուլերում հանդիպումների միջոցով քննարկվել է զբոսաշրջային արդյունաբերությունը ներկայացնող պետական և մասնավոր հատվածների ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների ընթացքում ներկայացված առաջարկությունները քննարկվել են բոլոր շահագրգիռ կողմերի, ինչպես նաև զբոսաշրջության բնագավառը կարգավորող օրենսդրության միջազգային փորձագետի հետ:

5. **Ակնկալվող արդյունքը**

Նախագծերով նախատեսվող որակյալ ուսումնասիրությունների իրականացումը, զբոսաշրջային ռեսուրսների գույքագրումն ու դրա տվյալների հիման վրա նոր մրցունակ զբոսաշրջային արդյունքների մշակումն ու խթանումը, հայկական զբոսաշրջային արդյունքի և զբոսաշրջային շուկաների դիվերսիֆիկացումը, զբոսաշրջային ծառայությունների որակի բարձրացումը, սպառողի իրավունքների իրականացման ապահովումը էապես կնպաստեն Հայաստանում զբոսաշրջության զարգացմանը, զբոսաշրջային համաշխարհային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի և Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի մրցունակության բարձրացմանը: Նախագծերի ընդունումը նշանակալի ներդրում կունենա Հայաստանում տնտեսական զարգացման, զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միջև արդար մրցակցության և իրավահավասարության, զբոսաշրջիկների համար անվտանգ և ապահով զբոսաշրջային միջավայրի ապահովման, Հայաստանի տարածքային համաչափ զարգացման, մարզերում և համայնքներում ենթակառուցվածքների զարգացման և եկամուտների լրացուցիչ աղբյուրների ձևավորման, զբոսաշրջային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման, հանրապետությունում զբաղվածության ավելացման խնդիրների լուծման գործում: Այն նաև լայն թափ կհաղորդի ընթացիկ զբոսաշրջային ծրագրերի բարեհաջող իրականացմանը և նոր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

6. **Ներկայացվող հարցի կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը**

Նախագծերի փաթեթի ընդունման դեպքում լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չկա:

7. **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թվականների ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ**

Նախագծերը բխում են Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050-ի 16-րդ «Ճանաչված, հարգված և հյուրընկալ Հայաստան» մեգանպատակից և «Վերափոխենք հարյուր միլիոնավոր օտարերկրացիների և նրանց առաջնորդների վերաբերմունքը Հայաստանի հանդեպ» «Զանգվածային վերափոխման իմաստը»-ից (հղում՝ https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf, 28-րդ և 70-րդ էջեր), Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «2 ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» կետի «Արտաքին տնտեսական քաղաքականություն և արտահանման խթանում»

բաժնի 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ պարբերություններից և «2.5 Զբոսաշրջություն» բաժնից (հղում՝ https://www.arlis.am/Annexes/6/2021_N1363hav.pdf, 27-րդ, 28-րդ և 38-39-րդ էջեր) և ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված հավելված 1-ի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 10.1 կետ (հղում՝ https://www.arlis.am/Annexes/6/2021_N1902hav.1.pdf 231-232-րդ էջ):